


ՀԱԽԵ ՍՊԻԿ ՀՐԴԵԼԱՅԻՆ ՊԱՅՊԱՆԻ ԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ԶՐՈՒՑՑ

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻՆԵՐԻ ՀԵՏ

ԱԵՐՆՎԱՆ 1936



ՀԱԽՑ ՆԳԲԿՎ ՀՐԴԵԼԱՑԻՆ ՊԱՀՈԱՆՈՒԹՅԱՆ ՔԱԺԻՆ

698.74


59.

A $\frac{\pi}{3570}$

1966/6

ԶՐՈՒՑՑ

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒՀԻՆԵՐԻ ՀԵՏ



Պատ. խմբագիր՝ Ս. Զատիթյան

Պետհրատի տպարան, Յեղևան

Հունվ. 84 Գլավչիտ Ա. - 8 Պատկեր 1870 Տիրուք 3100

ԲՆԼԵՐՆԵՐ.

Զեղանից շատերի աշխատանքային որն սկսվում է պրիմուսի և կերոսինկայի ժողով։ Զեղանից վոմանք գործ են ունենում փայտով և գաղով տաքացվող պլիտաների հետ, վոմանք որվա ընթացքում մի քանի անգամ նաև սամովար են յեռացնում։

Նավթը, լուծկին, գաղը և փայտը մեզ հարկավոր են այս կամ այն տնտեսական աշխատանքի համար։

Որվա ընթացքում դուք մի քանի անգամ վառում և հանգցնում եք պրիմուսը, կերոսինկան կամ վառարանը (պլիտան)։ Կրակը ձեր մշտական ոգնականն ե։ Կերակուր պատրաստել, ջուր յեռացնել թեյի,

լվացքի, ամանները լվանալու
կամ յերեխային լողացնելու հա-
մարայդ բոլորի համար կրակ և
հարկավոր:

Բայց դուք կրակի հետ միշտ ել
զգուշաբար չեք վարվում: Յերբեմն
դուք նավթ եք լցնում կերոսինկի
պահամանի մեջ, իսկ կերոսինկան
չեք հանգցնում: Դուք շատ եք վրս-
տահում ձեր «արտադրության գոր-
ծիքների» վրա. Դուք կոռպերատիվ
կամ հացի խանութ եք դնում ու
տանը թողնում եք առանց հսկողու-
թյան վառած պրիմուսը կամ կե-
րոսինկան: Յերբեմն ձեր բացակա-
յութամբ վառված ելինում պլիտան
վառարանը և կերոսինկան:

Այդ բոլորը տեղի յեն ունենում
ամեն որ, տեղի յե ունենում յուրա-
քանչյուր տանը, ամեն մի քայլա-
փոխում: Բայց, ըստ Եյության դե-
պի կրակն այդպիսի վստահություն

ունինալ չի կարելի վոչ մի տեղ և
յերբեք:

Ախր ի՞նչ ե լինում կրակի հետ
անփույթ վարվելու հետեանքը:
Դուք նավթ եք լցնում, առանց կե-
րոսինկան նախապես հանգնելու:
Նավթը հեշտությամբ կարող է
բռնկվել ձեր ձեռքում, վորովհետե-
կրակը չափազանց մոտ է դանվում:
Սովորաբար այդպիսի դեպքերում
անզգույշ տնտեսուհին ձեռքերի,
յերեսի ուժեղ այրվածքներ ե ստա-
նում: Յերբեմն կրակը բռնում է
նաև հագուստը:

Լավ է, յեթե մոտերքում հան-
գիստ, իրեն չկորցնող մարդ է դրա-
նվում, վնասվածին նա կփաթաթէ
վերմակով և հենց դրանով ել կրա-
կը կհանգնի: Իսկ յեթե դուք բնա
կարանում մենակ եք և մարդ չկա-
վոր ձեզ ոգնի: Այն ժամանակ դուք
ավելի լուրջ վնասվածքներ կստա-

նաք, այրվածքները կարող են մահ-
վան պատճառ դառնալ և, բացի
այդ, ընակարանում հրդեհ ել կա-
ռաջանա: Կարող ե հրդեհ առաջա-
նալ այն դեպքում, յեթե դուք, ընա-
կարանից թեկուզ կարճ ժամա-
նակով հեռանալիս, առանց հսկո-
ղության թողնեք վառած պրիմուսը,
կերոսինկան կամ վառարանը:

Չեր անզգուշությունը կարող ե խո-
շոր վնասներ պատճառել ձեզ, ձեր հա-
րեաններին և կոմունալ տնտեսու-
թյանը, յեթե տունը հրդեհից վնաս-
վի: Սակայն պետք ե հիշել, վոր
տունը հասարակական, սոցիալիս-
տական սեփականությունն ե: Յեթե
տունն այրվի, ապա վնասվում եք
վոչ միայն դուք, այլ և այդ տան
մյուս ընակիչները, կրակը վոչնչաց-
նում ե մեր բոլորիս աշխատանքը:

Շատ հաճախ յերեխաններին թույլ
էք տալիս տանը կերոսինկա վառել:

Յերբեմն վոքը յերեխաների վրա
բավականաչափ հսկողություն չի
լինում, և վոքը բը մոտենում են
պրիմուսներին և կերոսինկաներին:
Բավական ե մի անզգույշ շարժում
անել, և յերեխան վայր կդցի կերո-
սինկան, կվիճասվի ինքը, և հրդեհ
կառաջանա:

Ամենավտանգավորն ե՝ յերեխա-
ներին տանը մենակ թողնել առանց
հսկողության: Հասակավորների բա-
ցակայության ժամանակ յերեխանե-
րը սիրում են խաղալ կրակի հետ,
և մենք շատ հրդեհներ ունենք, վո-
րոնք առաջացել են յերեխաների՝
կրակի հետ խաղալուց: Դեպքեր են
յեղել, յերբ այդպիսի հրդեհների
ժամանակ յերեխաներն այրվել .են:

Մի խոսքով կրակի հետ ան-
փույթ վերաբերվելու հետեանքով,
մենք շատ հրդեհներ ենք ունեցել
և ունենում ենք: Բնակելի շենքե-

բռմ տեղի ունեցած ամեն մի հինգ
հրդեհից, չորսն առաջանում են ու-
սանձին անձնավորությունների կող-
մից աչքաթող անելու և անփութ
վերաբերվելու հետևանքով։ Ուստի
դուք ինքներդ դատեցեք, թե դեռևս
վորքան մեծ է մեր անփութությունը
կրակի հետ վարվելու ժամանակ։

Մենք, իհարկե, չենք ուղում ա-
ռել, վոր բոլոր հրդեհների այդ չորս
հինգերորդը տեղի յեն ունենում բա-
ցառապես տնային տնտեսուհիների
և տնային աշխատավորուհիների մեջ
անփութության պատճառով։ Կրակի
հետ անզգույշ են վերաբերվում նաև
շատ ուրիշ անձնավորություններ։
Բայց վորովհետեւ տնային տնտեսու-
հիները և աշխատավորուհիները
մյուսներից ավելի շատ են կրակի
հետ գործ ունենում, ապա բնական
է, վոր մենք հենց նրանց հետ ել
պետք է խոսենք այն մասին, քե-
ինչպես կանխել հրդեհները։

Բնակելի շենքում հրդեհը շտփա-
գանց վտանգավոր է, վորովհետեւ
դրա հետ միասին հեշտությամբ կա-
րող են մարդկային զոհեր տեղի ու-
նենալ: Հրդեհի դեպքում յերեխա-
ները, ծերերը և հիվանդները կա-
րող են միանգամայն անպաշտպան-
դրության մեջ ընկնել և առավել
այն աներում վորտեղ միայն մեհ
յելք և յինում:

Հրդեհները հատկապես վտանգա-
վոր են գիշեր ժամանակ, յերբ տան
ընակիչների մեջ հեշտութամբ կա-
րող է խուճապ առաջանալ: Իսկ
խուճապի ժամանակ հնարավոր են
նաև մարդկային զոհեր: Ցերեկը,
յերբ հասակավորների մեծ մասը աշ-
խատանքի մեջ է զանվում, հրդեհի
ժամանակ հատկապես վտանգ է
սպառնում յերեխաներին ու ծերե-
րին:

Մարդկանց հետ տեղի ունեցող
այդ բոլոր դժբախտությունները և
այրված բնակարաններից ու դուշ
քից առաջացած կորուստները հենց
մենք ել պետք են կանխենք:

Ի՞նչ պիտի իմանալ Հրդեհները
կանխելու համար: Քիչ ե ասել՝
«զգույշ յեղեք կրակի հետ»:

Թեպետ այդ դվիսավոր պատղամն
ե, բայց այնուամենայնիվ այդ բա-
վական չե: Հրդեհներից խոսափե-
լու համար անհրաժեշտ ե, վոր յու-
րանքանչյուր բնակիչ իմանա հիմ-
նական հակառակային կանոննե-
րը:

Այսպես, որինակ, չե կարելի
գնալ ձեղնահարկը (չերդակը), սա-
բայը և նկուղը վառած մոմով կամ
լուցկով, այսինքն բաց ճրադով:
Յեթե անհրաժեշտ ե այդպիսի տե-
ղեր գնալ, ապա պետք ե ծածկած
լապտեր վերցնել:

Տնտեսուհիները հաճախ դժողովություն են հայտնում, յերբ նավթի խանութներում միանգամից շատ նավթ չեն տալիս: Այդ պատճառով ել բոլորին անհրաժեշտ ե իմանալ, վոր մեկ ընտանիքի համար թույլատրվում ե տանը նավթ պահել 8 լիտրից վոչ ավելի: Յեվ, ի հարկ ե, նավթը պետք ե հեռու պահել վառձ վառարաններից, ուրիմուսներից և կերոսինկաններից: Պրիմուսներից և սամովարներից կարելի յե ոգտվել միմիայն խոհանոցում, բայց վոչ մի դեսլքում չի կարելի սանդուխքների վրա և ժիջանցքներում:

Բայց խոհանոցներում ել դրանց չի կարելի առանց հսկողության թողնել: Մենք արդեն ասացինք, վոր հեշտությամբ կարող ե հրղեհ առաջանալ, յեթե կերոսինկայի իամ կերոսինի լամպի մեջ նավթ լցնենք նրանց վառած վիճակում:

Ճատ տնտեսուհիներ սովորություն ունեն վառարաններ վառել նավթի կամ դենատուրոտի (ընափոխած սպիրտի) ոգնությամբ: Երանից պետք է ընդմիշտ երաժարի: Բանն այն է, վոր յերբ նավթը շփում եք վառարանի մեջ, ապա Տի քանի վայրկյանից հետո պարթում ե տեղի ունենում, վորի հետևանքով բոցը վառարանի դռնից դուրս ե նետվում, և այն ժամանակ՝ յըսվածքը, իսկ շատ հաճախ երդեհն անխուսափելի յել լինում:

Մի քանի պաշարատես տնտեսուհիներ դուրս են հանում վառարանի մեջ յեղած ածխացած կրակը տնային տնտեսության մեջ դուրծածելու համար: Բայց այդ դեպքում նրանք դեռ չհանգցրած կրակը լցնում են վայտե արկղների, թոշի կտթսաների մեջ: Հասկանալի յե, վոր վառարանի ածխացած կրա-

կըն այդ ձևով պահելը վտանգավոր
է իրդեհի տեսակետից և այդ պատ-
ճառով ել անթույլատրելի յե: Վա-
ռարանի մեջ մնացած ածխացած
կրակը պետք է լցնել վոտներ ունե-
ցող մետաղե ամանի մեջ, վորը
պետք է Հրդեհաբիկորեն ծածկվի
իրավաբերով (ածխամարիչ): Զհան-
դած կրակը դուրս թափել բակում
կամ փայտե շինությունների մոտ
չի կարելի:

Յեթե բնակարանում մշտական
վառարաններ չկան, սանիտարական
բժշկի և Հրդեհային տեսչության
թույլավությունը կարելի յե ժա-
մանակավոր վառարաններ դնել
տաքացման մեկ սեղոնից վոչ ավելի
ժամանակով: Ժամանակավոր վա-
ռարանները դրվում են հատուկ պայ-
մաններում. Համաձայն Հրդեհային
հսկողության ցուցմունքով: Չի կա-
րելի ժամանակավոր վառարան դնել

**մինչև դրա համար թույլտվություն
ստանալը:**

Յերկու ամիսը մեկ անգամ ծխանց-
քը պետք է մրից մաքրել, ծխանց-
քի մեջ մրի բոցավառվելուց և հըր-
դեհ առաջանալուց խուսափելու հա-
մար։ Այդուես ե յեղել Սվերդլովի-
փողոցի №95 տանը, վորտեղ ծխնե-
լույղի մեջ մրի բոցավառվելու ժա-
մանակ վառվել ե չերդակի հեծանա-
ծածկը ճեղքից դուրս թռած կայ-
ծերից։

Դեռ բոլորն ել չեն յուրացրել,
վոր այն բնակարանները, վորտեղ
մենք ապրում ենք, հանդիսանում են
հասարակական սեփականություն,
և մենք, վորպես մեր բնակարան-
ների տերեր, պետք ե աչալուրջ կեր-
պով պահպանենք այդ բնակարան-
ները։ Յեթե տան վարչությունը
մոռագել և ծխանցքները ժամանա-

կին մաքրել տալ, ապա մենք պետք
ենք նրան հիշեցնենք այդ մասին և
սլահանջենք, վոր նա ծխանցքները
մըրից մաքրել տա. անցյալ 1935 թվի
ընթացքում ընակելի չենքերի բոլոր
հրդեհների մի քառորդ մասը առա-
ջացել է վառարանների և ծխանցք-
ների անսարքություններից: Հենց
այդ պատճառով ել մենք հանձնա-
բարում մենք հատուկ ուշադրու-
թյամբ հետեւ վառարաններին և
ծխանցքներին:

Մեր կենցաղում հանդես են
յեկել մեծ քանակությամբ ելեկ-
տրական անոթներ՝ պլիտաներ, հար-
թուկներ, թեյամաններ, և այլն:

Դրանք ոգտագործման համար
չառ հարմար են, բայց միևնույն
ժամանակ կարող են հրդեհի պատ-
ճառ հանդիսանալ: Բավական ե
լեկտրական ցանցին միացրած հար-
թուկը սեղանի, հատակի կամ մի
այլ փայտե բանի վրա դեն, և փայ-

որ կարձ ժամանակից հետո կալոդ
ե վառվել։ Հարթուկը պետք է զնել
հասուկ հրակայուն պատվանդանի
վրա։

Յեթե ելեկտրական լամպը թրո-
թով վաթաթեք, ապա թուղթը կա-
րող է վառվել և, աչքաթող անելու
գելքում, կարող են վառվել և
մյուս իրերը։

Տնտեսուհիներից վոմանք ելեկ-
տրական լարերին պարաներ են կա-
պում լվացքը չորացնելու համար։
Անջատիչների վրա հազուստ և այլ
իրեր են կախում։ Ժամանակի ըն-
թացքում այդպիսի վերաբերմուն-
քից ելեկտրական լարերի մեկուսա-
ցիչը մաշվում է և, յերբ յերկու
լարերն իրենց մերկացած տեղերով
իրար շփվում են, ապա կարճ միա-
ցում է տեղի ունենում, վորք կայ-
ծեր և կրակի բռնկում է տալիս,
վորից վառվում է լարի վրայի մե-
կուսացումը և դրանից մոտիկ

գտնվող իրերը (հազուսութը, թուղթը, փայտե իրերը, պատի պատառները և այլն) :

Հետեապես ելեկտրական լարերի, ինչպես և ելեկտրական սարքավորման հետ վարվելու ժամանակ շատ զդույշ յեղեք։ Լարերի կարծիացումից հրդեհները բավականին շատ են լինում։

Յերեակայեցեք, վոր ձեր տանը հրդեհն է։ Դուք և ձեր հարեանները դեռ ժամանակ ունեք բնակարանից վորոշ իրեր դուրս հանել։ Տնային իրերը դուրս հանելու ժամանակ, դուք հեշտոթյամբ կարող եք սանդուխքի վրա մնալ, վորովհետեւ յերբեմն սանդուխքների և նրանց հարթակների վրա զանազան անպետք իրեր են դրած լինում։

Բնականարար դուք և ձեր հարեվանները իրարանցման ժամանակ իրերի հետ միասին մնում եք սանդուխքի վրա և չեք կազմողանում

իրերը փողոց դուրս հանել։ Բայցի
դրանից դուք անշուշտ մյուս բնա-
կիչների ճանապարհը կկտրեք, վո-
րոնք առանց իրերի դուրս են դա-
լիս։ Նման խճողվածությունը շատ
վտանգավոր է նաև կյանքի համար,
ուստի հետևեցեք, վոր ընդհանուր
միջանցքները, սանդուխքները և
նրանց հարթակները միշտ աղան-
ձնեն։ Այդպիսի տեղերում իրեր
պահելը վոչ վոքի չի թույլատըր-
վում։

Մի քանի տնտեսուհիներ ափսո-
սում են բաժանվել այնպիսի իրե-
րից, ինչպիսիք են կոտրած աթոռը,
հին ներքնակը և այլն։ Յեթե յեթե
միջանցքում պահել չի կարելի, ապա
նրանք այդ իրերը բարձրացնում են
չերդակները։ Յեթե վորեւ անսար-
քություն լինի ծխանցքի մեջ, այդ
անպետք իրերը կարող են վառվել և
արագացնել հրդեհի զարդացումը։
Ահա թե ինչու չերդակները պետք ե-

նույնպես մաքուր ու ազատ պահել
անպետք իրերից :

Ահա թե հիմնականում ինչ պիտի
անել և ինչից պիտի խուսափել,
ամենորյա կանքում կրակի հետ
վարվելու ժամանակ : Բացի հրդեհի
հասցրած վնասներից, այս կանոն-
ները չպահպանելու դեպքում,
դրանց խախտելու գործում մեղա-
վորները կարող են տուղանվել հըս-
դեհային տեսչության կողմից մինչև
100 ո., կամ կարող են յենթարկվել
հարկադիր աշխատանքի մինչև 30
որ ժամանակով, համաձայն Քաղ-
իորհրդի պարտադիր վորոշման :

Զեղ համար և մեր կոմունալ որն-
տեսության համար հսկայական ո-
գուտ կլինի, յեթե դուք, ընկերներ,
նախազգուշակսն միջոցներ ձեռք
առնեք հրդեհների դեմ և ուրիշներին
ել սովորեցնեք, թե ինչպես այդ մե-
ջոցները կիրառել, վորովհետեւ
դուք, հրդեհից պահպանելով ձեր

տոնը, պահպանում էք Հանրային
սեփականությունը:

Մենք ձեզ պատմեցինք, թէ ինչ
չպիտի անել Հրդեհից խռոսափելու¹
համար: Զեղանից շատ և կախված
Հրդեհի կանխումը: Յեթե տան վար-
չությունը Հրդեհները կանխելու²
մասին չի մտածում, ապա այդ
գործին պետք է ձեռնարկեն տնային
տնտեսուհիներն ու աշխատավորու-
հիները և պետք է ներդրային ավյալ
տանը բոլոր ապրողներին:

Վորապեսզի իզուր տեղն ուժերը
չծախսենք, պետք է գործենք կազ-
մակերպված ձեռի: Զեր տանը պետք
է հասարակական Հրդեհային լիա-
զոր լինի, իսկ յեթե ավյալ տանը
50 մարդուց ավելի մշտական բնա-
կիչներ են ապրում, ապա պետք է
կազմակերպել նաև Հրդեհային պահ-
պանության աջակցող բջիջ:

Բջիջում պետք է առնվազն 5 մարդ
լինի, և նրանց պետք է գրանցել ձեզ

ՀՐԴԱՆԻ ՀՐԴԵՀԱՅԻՆ պահպանության
պետի մոտ։ Հենց նրանից ել ցուց-
մունքներ են ստանում իրենց աշխա-
տանքի մասին։

Ապա ինչ պիտի անի ՀՐԴԵՀԱՅԻՆ
պահպանությանն աջակցող բջիջը։
Բջիջի հիմնական խնդիրն ե՝ ՀՐԴԵՀ-
ՆԵՐԻ կանխռումը։

Նախազգուշացման այն հիմնա-
կան կանոնները, վորոնց մասին մենք
խոսեցինք ձեզ հետ, բջիջի անդամ-
ները պետք ե տարածեն տան մնացած
բնակիչների մեջ։ Նրանք պետք ե
ՀՐԴԵՀԱՅԻՆ կազմակերպություններից
զեկուցող հրավիրեն և տվյալ տանը
զբույց կազմակերպեն ՀՐԴԵՀՆԵՐԻ
կանխման մասին, հակահրդեհային
միջոցառումների մասին պլակատ-
ներ գնեն, և տան մեջ ՀՐԴԵՀԱՅԻՆ
պահպանության անկյուն կազմա-
կերպեն, տան բնակչության մեջ
ՀՐԴԵՀԱՅԻՆ գրականություն տարա-
ծեն և այլն։ Բայց գլխավորն ե՝ սոր-

վորեցնել ցույց տալով, սիստեմա-
տիկորեն ստուգել, թե ինչպես են
կատարում տան վարչությունը և
առանձին բնակիչները հակահրդե-
հային կանոնները և քաղաքային
խորհրդի շրջխորհությունների վորա-
շումները:

Հրդեհային տեսչությունը, տունը
հետազոտելով, արձանագրություն
է կազում: Պետք է ստուգել, արդյոք
կատարված է տան վարչության և
բնակիչների կողմից այն ամենը, ինչ
արձանագրված է ակտի մեջ: Պետք
է ոժանդակել հակահրդեհային կա-
հավորում (կրակմարիչներ, և այլն)
գնելուն և հետեւել այդ կահավորման,
սարքինությանը: Անհրաժեշտ է սո-
վորեցնել տան բնակիչներին, թե
ինչպես ոգովվել այդ կահավորումից:

Հրդեհի դեպքում, աջակցող բջի-
ջի անդամները կազմակերպում են
բնակիչների գույքի պահպանում և
ոժանդակում են հրդեհի հանգցնե-

լուն իրենց տրամադրության տակ
յեղած միջոցներով:

Մենք արդեն հրդեհային պահպա-
նությանն աջակցող մի շարք շատ
ակտիվ բջիջներ ունենք: Հիշենք
Լիրկնեխտի փողոցի №14 տունը: Այն
տեղ սկզբում ընտրվել էր հրդեհային
հասարակական լիազոր ընկ. Մա-
նուկյանը: Նա շատ յեռանդուն հա-
սարակական աշխատաղ դուրս յեկավ,
և նրա մասնակցությամբ հրդեհային
պահպանությանն աջակցող բջիջ եր
կաղմակերպել: Հակահրդեհային մի-
ջոցառումներին ներգրավեցին 10-ից
ավելի տնային տնտեսուհիներ և
աշխատավորուհիներ:

Այսպիսի բջիջներ կտրելի յե և
պետք ե ստեղծել յուրաքանչյուր
ընակվարձկռոպում, յուրաքանչյուր
տանը:

Ընկերներ, հեղափախությունը
կանանց առաջ ե քաշել սոցիալիստա-
կան հասարակարգի կառուցողների

առաջին շարքերը։ Նոր սոցիալիստական կենցաղի ստեղծման գործում, կնոջը հսկայական դեր է պատկանում։ Բայց, նոր կենցաղ ստեղծելիս, պետք է սովորել ու պահպանել այն և հասարակական սեփականությունը կրակից, վորը մեր ամենալուրջ թշնամիներից մեկն ե։

Հրղեհները կանխելու հիմնական կանոնները պետք են նաև ծանոթ լինեն յուրաքանչյուր տնային տնտեսուհուն և աշխատավորուհուն, ինչպես ամեն որ ձեռքերն ու յերեսը լվանալը։

Իրենց և իրենց մերձավորների կյանքի պահպանման, հասարակական-սոցիալիստական սեփականության պահպանման համար մենք եւ կոչ ենք ուղղում տնային տնտեսուհիներին և աշխատավորուհիներին։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038044

[0543]

